



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ բնապահպանական և առողջապահական տեսանկյուն



Պատրաստվել է Ուրբան Հիմնադրամի կողմից
ԳԷՀ-ի ՓԴԾ-ի աջակցությամբ իրականացված
Պլաստիկ աղբից գերծ կապան
հոգատարություն բնության հանդեպ ծրագրի
շրջանակներում

Երևան, 2014թ

Բովանդակություն

Ներածություն.....	3
Աղբահանության ներկա վիճակը Հայաստանի համայնքներում	5
Աղբավայրերի վիճակը Հայաստանում	7
Օրենսդրություն, ներքին կանոնակարգեր և որոշումներ	8
Աղբահանության ոլորտում իրականացվող գործընթացներն այսօր.....	8
Աղբահանության ծառայություն մատուցողները Հայաստանում.....	10
Աղբի վերամշակման հնարավորությունները.....	11
Հանրության հետ աշխատանքը.....	12
Մասնավոր հատվածի ներգրավման անհրաժեշտությունը.....	12
Աղբի կառավարման հիերարխիայի և ռազմավարական մոտեցման ներկայացում	15

Ներածություն

Այս փաստաթղթի մեջ հնարավորինս հանրամատչելի, լայն լսարանի համար ամփոփ ներկայացվում է Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) կառավարման, այլ կերպ ասած՝ աղբահանության, ներկա իրավիճակը:

Աղբահանությունը խնդիրը մարդկության առաջ ծառայել է դեռ շատ վաղուց և տարբեր ժամանակներում մարդիկ փորձել են ինչ-որ լուծումներ առաջարկել աղբի կառավարման ուղղությամբ, որոնք աստիճանաբար կուտակվելով ընկել են ժամանակակից համաշխարհային փորձի հիմքում:

Դեռևս մ.թ. 3000 տարի առաջ Կրետե կղզում աղբը հեռացվում էր այդ նպատակով հատուկ փորված հորերում, իսկ այնուհետև՝ ծածկվում հողաշերտով: Մեզ հասած աղբահանությանը վերաբերող առաջին օրենքը, որը սահմանում էր աղբի հեռացման կանոնները, ընդունվել է մ.թ. 2500 տարի առաջ Աթենքի իշխանությունների կողմից. պոլիսի քաղաքացիները պարտավոր էին աղբը հեռացնել քաղաքից առնվազն 1.5 կմ այն կողմ: 11-րդ դարում Ճապոնիայում կատարվեց աղբի վերամշակման առաջին փորձը. հավաքվում էին հին թուղթը և վերամշակելով ստանում նորը:

14-րդ դարում Անգլիայում և Ֆրանսիայում սահմանվեցին տուգանքներ քաղաքի փողոցների աղտոտման համար: Անգլիայում և Գերմանիայի շատ քաղաքներում արգելվեց ջրային ավազանների մերձակայքում աղբի նետումը: 16-րդ դարում Անգլիայի թագուհին հատուկ հարկային արտունություններ է շնորհում աղբի հավաքման և տեղակայման համար:

18-րդ դարում, երբ սկսվեց ԱՄՆ անկախության համար պատերազմը, հյուսիսամերիկյան գաղութների իշխանությունները, զգալով զինամթերքի համար անհրաժեշտ հումքի պակաս, աղբի հավաքման և կուտակման քարոզարշավ սկսեցին: Վերածուլման ենթակա մետաղական թափոնների հավաքումն ու պահեստավորումը յուրաքանչյուրի հայրենասիրական պարտքն էր համարվում: ԱՄՆ-ում այն դարձավ ավանդույթ և շարունակվեց կիրառվել նաև առաջին և երկրորդ աշխարհամարտերի ժամանակ:

19-րդ դարում, երբ սկսվեց ինտենսիվ ուրբանիզացիան, աղբի ծավալները զգալիորեն աճեցին և քաղաքային իշխանությունները, գիտակցելով, որ աղբի հեռացումը կենսականորեն կարևոր խնդիր է, ստեղծեցին համայնքային առաջին աղբահանության ծառայությունները: Մինչ այդ աղբահանությամբ զբաղվում էին մասնավոր անձինք: Բրիտանական խորհրդարանը օրենք ընդունեց աղբի պահեստավորման և վերամշակման վերաբերյալ՝ պարտադրելով ապահովել բնակչության առողջությունը: Նոթենհեմում սկիզբ դրվեց աղբից էիներգիայի ստացման պրակտիկային: Աշխարհում առաջին անգամ Նյու-Յորքում բնակիչների առջև դրվեց աղբի (սննդի, թղթի, մետաղի) տեսակավորման պարտավորություն: Դրանք նետվում էին փողոցում տեղադրված հատուկ աղբարկերի մեջ: Քաղաքում կառուցվեց աղբի վերամշակման առաջին գործարանը: Նույն ԱՄՆ-ում հիմնվեց առաջին հասարակական կազմակերպությունը, որի զլխավոր առաքելությունը շրջակա միջավայրի պաշտպանությունն էր՝ ներառյալ աղբից:

Ժամանակակից աշխարհում կենցաղային աղբի բաղադրությունը փոփոխության է ենթակվում: Պլաստիկի ծավալը ընդհանուր աղբի մեջ սկսում է աստիճանաբար մեծանալ: 1970-ականներից ԱՄՆ-ում սկսվում պլաստիկ շշերի ինտենսիվ կիրառումը կենցաղում: 80-ական թվականներին արդեն մի շարք երկրներ, եկան այն եզրահանգման, որ թափոնների խնդրի լուծման ամենաեռանկարային լուծումը աղբի վերամշակումն է: Գերմանիան, որտեղ աղբի տեսակավորումն ու վերամշակումը ինտենսիվորեն սկսվել է 90-կանների առաջին կեսին, այսօր արտադրվող աղբի 80%-ից ավելին վերադրածնում է տնտեսություն, աղբի մնացած մասն օգտագործվում է ջեռուցման կամ էներգիա ստանալու նպատակով: Ըստ գերմանացի մասնագետների հաշվարկների՝ առաջիկա տարիների արտադրվող արդեն արդեն բավարար չի լինելու աղբի վերամշակման ձեռնարկությունների համար և հնարավոր է, որ աղբը ներմուծվի այլ երկրներից:

Աղբի վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա: Շրջակա միջավայրին և մարդու առողջությանը աղբի հասցրած վնասների մասին այօր առկա է բազմաթիվ տեղեկատվական նյութեր, գիտական աշխատություններ և ուսումնասիրություններ: Հայաստանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աղբը տարածվում է հիմնականում քամու, աղբաթափման վայր թափանցող կենդանիների միջոցով, առկա է բաց այրումից և աղբավայրի ինքնայրումից առաջացած դիօքսինի և ֆուրանի արտանետումների վտանգ:

Չկառավարվող աղբը հղի է բացասական հետևանքներով. աղբավայրի մեծ հատվածներ մշտապես այրվում են: Վառվող աղբը և ծուխը ստեղծում են վտանգավոր գազերի խիտ ամպեր աղբավայրերի շրջակայքում վնաս պատճառելով շրջակա միջավայրին և մարդկանց: Ցանկացած աղբավայր գոյացնում է աղբավայրի գազեր, որոնք բաղկացած են մեթան գազից և դիօքսինից: Այդ գազերը գոյանում են աղբավայրի գործարկման ընթացքում և մնում են դեռևս 20-30 տարի աղբավայրը փակելուց հետո: Մեթան գազը և դիօքսինիը ջերմոցային գազեր են և հատկապես մեթանը նպաստում է գլոբալ տաքացմանը: Տիաճ հուտը և տեսարանը նույնպես ազդում են մարդկանց վրա:

Շրջակա միջավայրի աղտոտվածությունը ավելացավ, աղբի ծավալները մեծացան, երբ կենցաղում սկսվեց պլաստիկ կիրառումը: Ինչպես նշվեց, պլաստիկ ակտիվ օգտագործումը կենցաղում առաջին անգամ սկսվեց 20-րդ դարի 70-ականներին: Կան պլաստիկ տարբեր տեսակներ, որոնցից այօր ստանում են կենցաղում օգտագործվող տարբեր ապրանքներ: Ստորև ներկայացված են դրանցից մի քանիսը.

- PET Պոլիէթիլեն տերեֆտալատ (ստանում են, օրինակ, շշեր, բանկաներ, տուփեր միկրոալիքային վառարանի մեջ սնունդ տաքացնելու համար: Օրինակ՝ վեց շիշը կարող է լինել մեկ լամպ, հարյուր քառասուն շիշը մեկ ճամպուկ և այլն):
- PP Պոլիպրոպիլեն (ստանում են, օրինակ, փաթեթավորող թաղանթ, շշերի տարաներ):
- PS Պոլիստիրոլ (ստանում են, օրինակ, կաթնամթերքի տարաներ, պենոպլաստ, միանգամյա օգտագործման ամանեղեն և այլն):
- PVC Պոլիֆինիլքլորիդ (ստանում են, օրինակ, զովացուցիչ խմիչքների որոշ շշեր, կենցաղային քիմիայի շշեր, արկղեր և այլն):

Հատկապես պլաստիկ շշերի՝ PET-ի օգտագործումն անհրաժեշտություն դարձավ, քանի որ դրանք, ինչպես ասում են, գեղեցիկ են ինչպես բյուրեղը, թեթև՝ ինչպես օձառի փուչիկը, չեն կոտրվում և ամուր են պողպատի նման: PET-ը ենթակա է հարյուր տոկոս վերամշակման:

Իր տնտեսական առավելություններով հանդերձ՝ PET-ը լուրջ վնասակար ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա և՛ արտադրության փուլում, և՛ երբ այն չի վերամշակվում, այլ նետվում է շրջակա միջավայր: Իսկ վիճակագրությունը մտածելու լուրջ տեղիք է տալիս. տարբեր տվյալներով տարեկան 63 միլիարդ պլաստիկ շշեր են նետվում աղբավայրեր կամ օվկիանոս: PET-ը պատրաստվում է հիմնականում հում նավթից: Տարեկան 2.5 միլիոն տոննա CO2 արդարավում է պլաստիկ շշեր արտադրող ձեռնարկությունների կողմից: Այս ամենը նպաստում է կլիմայի փոփոխության և գլոբալ տաքացմանը:

PET-ը բնության մեջ կենսաբանական քայքայման չի ենթարկվում, այլ ենթարկվում է լուսային քայքայման, որը նշանակում է, որ այն ժամանակի ընթացքում մասնատվում է մանր մասնիկների, որոնք կլանում են տոքսիններ, թույներ՝ աղտոտելով ջուրը, հողը՝ դրանով հիվանդացնելով կենդանիներին և թռուներին, որոնց միջոցով թափանցում սննդի շղթա և վնասում մարդու առողջությանը: Պլաստիկ աղբը կլանում է նաև

օրգանական աղտոտիչներ, ինչպիսիք են BPA և PCB: Գտնվելով աղբավայրում՝ դրանք դարձնում են քայքայվում:

Բիսֆենոլ Ա-ի (BPA) հետ շարունակական կոնտակտը կարող է հանգեցնել անպտղության, կրծքի քաղցկեղի և այլ առողջական խնդիրների: Այս քիմիկատը օգտագործվում է պլաստիկի և սպառադական բազմաթիվ այլ ապրանքների մեջ: Հատկապես, պահածոների մեջ այն օգտագործվում է կոռոզիան կանխելու նպատակով:

Պոլիքլորացված բիֆենիլը (PCB) պատկանում է մարդու կողմից ստեղծված օրգանական քիմիկատների ընտանիքին: Իր չայրվելու, ջերմադիմացկուն և էլեկտրամեկուսիչ լինելու հատկությունների շնորհիվ՝ ունի արտադրական լայն կիրառություն: Շրջակա միջավայր ընկնելով՝ PCB երկար չի քայքայվում և պտտվում է օդում, ջրում և հողում՝ ճանապարհորդելով շատ երկար տարածություններ այն վայրից, որտեղ այն նետվել է շրջակա միջավայր: Այն կարող է կուտակվել տերևների մեջ, բույսերի և սննդում օգտագործվող բերքի մակերևույթին: Այն կարող է հանգեցնել քաղցկեղի, այլ վնասակար ազդեցությունների ինունային, վերարտադրողական և նյարդային համակարգերի վրա:

Հետևաբար, նշված վտանգները նվազեցնելու համար պլաստիկի վերամշակումը դառնում է անհրաժեշտություն: Ինչպես նշվեց այն ձեռնտու է նաև տնտեսական նկատառումներից ելնելով: Այսօր ընդհանուր աղբից պլաստիկի 28%-ը առանձնացվում է ԱՄՆ-ում, 78%-ը ճապոնիայում և 98%-ը Գերմանիայում:

Այսպիսով, ակնհայտ է, թե ինչպիսի կարևորություն ունի աղբահանության պատշաճ կառավարումը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպիսին է այսօր աղբահանության վիճակը Հայաստանում և ինչպիսի՞ խնդիրներ պետք է հաղթահարվեն՝ նվազեցնելու դրանց բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Աղբահանության ներկա վիճակը Հայաստանի համայնքներում

Նախ, Հայաստանում այսօր այնպիսի մի իրավիճակ է, որ աղբի հեռացումը կատարվում գրեթե միայն քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքների գերակշիռ մասում աղբը չի հեռացվում: Բացառություն են կազմում, օրինակ, Վեդու տարածաշրջանի 15 գյուղական համայնքները, որոնց աղբահանությունը և աղբի տեսակավորումը կատարվում է Վեդու համայնքների միության կողմից, Ախուրյան համայնքը, որտեղ աղբահանությունը և աղբի տեսակավորումը կատարվում է համայնքի կողմից և սակավաթիվ մի քանի այլ գյուղական համայնքները, որոնք պարզապես հեռացնում են աղբը համայնքից: Իսկ աղբի, մասնավորապես, կոշտ կենցաղային թափոնների համափարփակ կառավարում, որևէ համայնքում՝ ներառյալ քաղաքային համայնքներում չի իրականացվում: Երկրորդ, այնպիսի ռեսուրսներով, ձևերով և մեթոդներով, ինչպես նաև մտածելակերպով, որ ներկայումս իրականացվում է աղբահանությունը Հայաստանում, հնարավորություն չէ նվազեցնել դրա բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Խորհրդային կարգերի օրոք ԿԿԹ հավաքման ու տեղափոխման տեխնիկան, որպես կանոն, կենտրոնացված ձևով ձեռք էր բերում և բաշխում էր պետությունը: Այժմ, սակայն, նշված համակարգի անկումից հետո, տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը) ի վիճակի չեն սեփական միջոցներով նոր տեխնիկա գնել կամ այն նորոգել: Վերջին նման համալրումը տեղի է ունեցել 20-րդ 80-ական թվականներին: Ժառանգություն մնացած մեքենաներն ու սարքավորումները փոշիացվել են տարերային սեփականաշնորհման կամ պարզապես ուղղակի վաճառքի արդյունքում: Հետխորհրդային շրջանում ոլորտը սպասարկող մեքենաների և սարքավորումների համալրումը եղել է հազվադեպ հիմնականում, միջազգային կազմակերպությունների (USAID, UNDP), մասնավոր հատվածի ոչ ամբողջ երկրի, այլ կոնկրետ համայնքերի համար, ինչպես նաև շատ քիչ թվով առանձին համայնքների կողմից: Աղբահանությունը համայնքներում իրականացվում է կա՛մ համայնքի, համայնքային ձեռնարկությունների, կա՛մ համայնքներում գործող մասնավոր հատվածի միջով: Մասնավոր հատվածի

ներգրավման դեպքում համայնքները հաճախ չունեն լայն ընտրության հնարավորություն և՛ ընկերության, և՛ մեքենասարքավորումների առումով, քանի որ մրցույթին մասնակցող ընկերությունների տեխնիկան նախ սակավաթիվ է, և հետո չի բավարարում տեխնիկական և սանիտարական նվազագույն պայմաններին. աղբահանություն իրականացնող մեքենաների շահագործման ժամկետը հաճախ սպառված է լինում, դրանք սովորաբար աղբահանության մասնագիտացված մեքենաներ չեն լինում, ուստի աղբը տեղափոխվում է բաց թափքով և հետևաբար ընթացքում տարածելով հավաքած աղբը, սակավության պատճառով կա՛մ չեն կարող սպասարկել ամբողջ համայնքը, բնակչությանը, կա՛մ աղբահանությունն իրականացնում են շատ ցածր հաճախականությամբ: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ դեպքում, աղբը կուտակվում է վնաս հասցնելով շրջակա միջավայրին և մարդու առողջությանը: Մյուս կողմից՝ մասնավոր աղբահանող ընկերությունների հետ համայնքի կնքած պայմանագրերը բավարար պայմաններ չեն ապահովում աղբահանության պատշաճ իրականացման համար:

Աղբահանությունը ինքնաձայնասածակվող գործունեություն է: Ավելին՝ այն նաև շահութաբեր գործունեություն է: Այն իրականացնելու համար պահանջվող ծախսերը ենթադրվում է ծածկել հիմնականում բնակչությունից և իրավաբանական անձանցից գանձվող վարձավճարների միջոցով: Ինքնաձայնասածակման համար լրացուցիչ աղբյուր կարող են հանդիսանալ աղբավայրի օգտագործման վճարները, ինչպես նաև առանձնացված վերանշակվող աղբից ստացվող եկամուտները: Սակայն այսօր Հայաստանում, կարելի է ասել, որ գրեթե որևէ համայնքում աղբահանության եկամուտները չեն ծածկում պահանջվող ծախսերը: Ծախսերը հիմնականում ծածկվում են համայնքի բյուջեով սանիտարական մաքրման համար նախատեսված գումարների հաշվին: Շատ քիչ դեպքերում են (Վեդու համայնքների միություն, Չարենցավան, մասնավոր ընկերություն), որ եկամուտներն ու ծախսերը գրեթե համակշռվում են:

Աղբահանության անմխիթար վիճակի բազմաթիվ պատճառների թվում է ռազմավարական մոտեցման, ներկա վիճակի գնահատման ու ապագա տեսլականի ձևավորման, պատշաճ պլանավորման բացակայությունը:

Մյուս պատճառը աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման իրական արժեքի հաշվարկի բացակայությունն է: Աղբահանության ծառայության դիմաց վճարվող գումարի չափը համայնքի ավագանու կողմից սահմանվում է առանց տնտեսական հաշվարկի, հաճախ այն որևէ կերպ չհիմնավորված խորհրդանշական գումար է, որը պայմանավորված է սոցիալական (բնակչության անվճարունակություն) և քաղաքական (ընտրություններ) դրդապատճառներով: Արդյունքում՝ աղբահանության ինքնարժեքը չի որոշվում, որից բխում է խնդիրների մի աբողջ շղթայի ճիշտ ըմբռնման և դրանց լուծման բացակայությունը:

Աղբահանության վատ կառավարման մեկ այլ պատճառ է դրա չիրականացումը համայնքի ամբողջ տարածքում՝ չնայած դա համայնքի ղեկավարի պարտավորությունն է: Ծառայության անբավարար ծածկույթը հնարավորություն չի տալիս ապահովել վարձավճարների լիարժեք հավաքագրում: Շատ են այն դեպքերը, երբ նույնիսկ աղբահանության ամբողջական ծածկույթ ապահովելու դեպքում բնակչության և իրավաբանական անձանց վճարելու պատրաստակամությունը ցածր է: Միջազգային պրակտիկայում, ինչպես նաև հայաստանյան քաղաքներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վճարելու պատրաստակամությունը մեծանում է, երբ մատուցվում է պատշաճ ծառայություն:

Այնուամենայնիվ, շատ համայնքներում, որտեղ վճարելու պատրաստակամության կա, կրկին ծախսերը գերազանցում են եկամուտները: Պատճառներից մեկը, որ նշվեց վերևում, ինքնարժեքի տնտեսական հաշվարկի բացակայությունն է: Այսինքն՝ աղբ արտադրողները չնայած պատրաստակամ են վճարելու, սակայն վճարում են ավելի քիչ գումար, քան անհրաժեշտ է իրենց արտադրած աղբի հավաքման և հեռացման համար: Մյուս պատճառը տվյալ համայնքում բնակչության անբավարար խտությունն է: Հատկապես փոքր համայնքներում, ինչպիսին է օրինակ Թումանյան համայնքը, մասնագիտացված մեքենայի առկայության դեպքում նույնպես ծախսերը գերազանցում են եկամուտները: Մասնագիտացված մեքենայի ներուժը ավելի մեծ է, քան մոտ 2000

բնակչություն ունեցող տվյալ համայնքին սպասարկելը: Մեքենան օրվա զգալի մասը կանգնած է, այնինչ կարող էր սպասարկել ավելի մեծ թվով բնակչության, օրինակ, այլ հարևան համայնքների, որոնք չունեն մասնագիտացված մեքենաներ: Դա թույլ կտար մեծացնել եկամուտները՝ բնակչության խտության հաշվին: Այսինքն՝ կա՛մ պետք է իրական տնտեսական հաշվարկի արդյունքում բարձրացնել վարձավճարը, կա՛մ սպասարկել ավելի մեծ թվով բնակչության: Որպես օրինակ կարող է հանդիսանալ Վեդու համայնքների միությունը:

Աղբահանության վատ իրականացման ևս մի կարևոր պատճառ է աղբի տեսակավորման և իրացման/վերամշակման պրակտիկայի գրեթե բացակայությունը: Եթե համայնքը և՛ ցանկանում հաշվարկել, և՛ կիրառել աղբահանության իրական ինքնարժեքը, և՛ միաժամանակ ցածր պահել աղբահանության վարձավճարները, ապա հետևողական քայլեր պետք է ձեռնարկի ընդհանուր կենցաղային աղբի տեսակավորման հարցում: Դրա համար, նախ, պետք է ուսումնասիրել համայնքում արտադրվող կենցաղային աղբի բաղադրությունը, այնուհետև սկսել տեսակավորումը, վերամշակվող աղբի առանձնացումը ընդհանուր աղբից: Սա հնարավորություն կտա զգալիորեն կրճատել հեռացվող աղբի ծավալները, հետևաբար և կիջնի դրա հավաքման, հեռացման և տեղակայման ինքնարժեքը, բնակչությունից գանձվող վարձավճարի չափը: Տեսակավորված աղբը կարող է երկրորդ կյանք ստանալ՝ վերադառնալով համայնքային տնտեսություն, դեռ ավելին, իրացումից գոյացած միջոցները կարող են ուղղվել աղբահանության ծախսերի հետագա նվազեցմանը:

Աղբավայրերի վիճակը Հայաստանում

Հայաստանում գրեթե գոյություն չունեն սանիտարական նվազագույն նորմերին համապատասխանող աղբավայրեր: Դրանք ավելի շուտ աղբաթափման վայրեր են: Աղբավայրի օրինակելի սխեման՝ նվազագույն ստանդարտներով, մշակված է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Սակայն համայնքները բավարար միջոցներ չունեն նմանատիպ աղբավայր կառուցելու համար:

Եթե քաղաքային բնակավայրերում կառավարության կամ համայնքի ավագանու որոշման հիման վրա գոնե հատկացված են տարածքներ աղբի տեղակայման համար, ապա գյուղական համայնքների գերակշիռ մասում համայնքի կողմից աղբահանություն ընդհանրապես չի իրականացվում: Հայաստանում աղբաթափման վայրերը սովորաբար գտնվում են համայնքներից դուրս: Աղբաթափման վայր տանող ճանապարհները հիմնականում անբարեկարգ են, ինչը, հատկապես ձմռանը, զգալի դժվարացնում է աղբատար մեքենայի շահագործումը: Աղբաթափման վայրերի մեծ մասում տեղանքի ուսումնասիրություն չի կատարվել՝ հատկապես հիդրոերկրաբանական ուսումնասիրություն, որը հնարավորություն չի տալիս գրունտային ջրերի առկայության մասին եզրակացության հանգելու: Շատ համայնքներում տարվա հատկապես զարնանային ժամանակաշրջանում գրունտային ջրերը անմիջական կոնտակտի մեջ են մտնում աղբի հետ՝ դրանից բխող բավականին լուրջ հետևանքներով: «Աղբավայրերը» ապահովված չեն արտաքին ջրերի մուտքից, հիմքերը ծածկված չեն հիդրոմեկուսիչ շերտով՝ կանխելու համար ջրի թափանցելիությունը, չի իրականացվում բնապահպանական և սանիտարա-համաճարակային ոչ մի միջոցառում, տեղի է ունենում աղբի ինքնայրում, որից առաջացած դիօքսինի և ֆուրանի արտանետումները ուղղվում են շրջակա միջավայր: «Աղբավայրերը» չունեն պաշտպանական որևէ կառուցվածք՝ ցանկապատ, մեքենաների լվացման կետ, արտաքին ջրերից պաշտպանող կառույց, դրենաժային և գազահեռացման համակարգեր, չի կատարվում «աղբավայրից» հեռացող թորանների ուսումնասիրություն և մոնիտորիզ: Ցանկապատ չլինելու պատճառով, «աղբավայրի» ամբողջ շրջակայքով տարածվում են թղթի մնացորդներ և պոլիէթիլենային տոպրակներ, ազատ է մարդկանց ու կենդանիների մուտքը:

Չեն կատարվում հաշվարկներ աղբավայրերի տարողության և շահագործման ժամկետների որոշման համար, չի կատարվում աղբավայր տեղափոխվող թափոնների հաշվառում, ինչպես նաև հսկողություն աղբի որակի նկատմամբ: Չեն կատարվում նաև աղբի վնասագերծման աշխատանքներ, աղբի ամենօրյա հարթեցում և խտացում:

Հազվադեպ են աղբավայրի շահագործման պայմանագրերը որևէ կազմակերպության հետ, ուստի հաճախ դրանք օգտագործվում են այլ կազմակերպությունների կողմից աղբի հեռացման նպատակով՝ առանց աղբավայրի վճար տրամադրելու, մյուս կողմից էլ նման վճար հիմնականում սահմանված չէ:

Օրենսդրություն, ներքին կանոնակարգեր և որոշումներ

Գոյություն ունեցող օրենսդրական դաշտը չի ապահովում աղբահանության ինտեգրացված կառավարումը՝ ներառյալ աղբի տեսակավորումն ու վերամշակումը: 2011թ հունիսի 23-ին ընդունվեց «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական առավելությունն այն է, որ վարձավճարների գանձումը ծառայության դիմաց դարձնում է պարտադիր: Այսինքն՝ վարձավճարների գանգավածային չվճարումները, որոնք համատարած էին նախկինում ամենուրեք (և պայմանավորված էր օրենքի բացակայությամբ) այժմ համարվում է օրենքի խախտում: Օրենքի ընդունմամբ սահմանվում է աղբահանության վճարը, որպես համայնքային վճար (պարտադիր գանձույթ), ինչպես նաև սահմանվում է աղբահանության վճար վճարողների շրջանակը: Աղբահանության վճար վճարելու պարտականությունը կրում է համայնքների վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, ինչպես նաև անշարժ գույք չհամարվող այլ շինությունների (օրինակ՝ շարժական կրպակներ եւ այլն) նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձը: Սակայն օրենքը թերի է, ինչպես նշվեց, լուծում է միայն վարձավճարի գանձման խնդիրը, ընդ որում, չի շեշտադրվում, որ դա պետք է վճարվի մատուցված ծառայության դիմաց, բնակչի հետ պայմանագրի հիման վրա, այլ ենթադրվում է, որ վճարը պետք է կատարվի զուտ աղբ արտադրելու փաստի պատճառով:

Աղբահանության ոլորտին ուղղակիորեն առնչվող՝ «Թափոնների մասին» օրենքը ընդունվել է 2004 թ.: Հետագայում 2005-2007թթ. ընդունվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներ թափոնների ռեեստրի վարման, գրանցման կարգի վերաբերյալ, որոնք հիմնականում վերաբերում են վտանգավոր թափոններին:

Սակայն «Թափոնների մասին» ՀՀ Օրենքը չի կանոնակարգում ԿԿԹ-ի կառավարումը և միայն թույլ է տալիս Կառավարությանը մշակել ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես աղբավայրերի տեղի ընտրության, ԿԿԹ-ի բաղադրության, արտադրվող, հավաքվող և հեռացվող թափոնների ծավալների վերաբերյալ:

Աղբահանության ոլորտին անուղղակիորեն վերաբերող և գործընթացը կարգավորող առկա օրենսդրությունից կարելի է նշել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը, «ՏԻՄ-երի մասին», «Բազմաբնակարան շենքերի մասին», «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքները և «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանը: ՀՀ ստորագրել է նաև մի շարք, շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող միջազգային համաձայնագրեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են աղբահանության խնդիրներին:

Աղբի հավաքման, հեռացման և վճարների հավաքագրման գործընթացում գործնականում բացակայում է նաև համայնքների ներքին օրենսդրությունը կանոնակարգերն ու համապատասխան որոշումները:

Աղբահանության ոլորտում իրականացվող գործընթացներն այսօր

Ոլորտը վերջին տարիներին ուշադրության կենտրոնում է: Ընդունվել է օրենք աղբահանության և սանիտարական մաքրման մասին, չնայած ինչպես նշվեց վերևում, այն անկատար է և չի կարգավորում ոլորտի շատ խնդիրներ: 2000-ականի կեսերից մինչ

այսօր աղբահանության ոլորտի բարելավման ուղղությամբ, հիմնականում միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ, հետազոտություններ, տեխնիկական աջակցություն և կապիտալ ծրագրեր՝ ազգային մակարդակից՝ մինչև կետային փոքր փորձնական ծրագրեր: Դրանք ուղղված են եղել աղբահանությանն առնչվող տարբեր խնդիրների. աղբավայրերին, աղբավայրերի ռազմավարական պլանների մշակմանը, տեխնիկական զինվածություն (աղբատարներ), աղբի տեսակավորում, աղբի բաղադրության ուսումնասիրություն: Հիմնական դերակատարներն են ԱՄՆ ՄՋԳ-ն, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Ասիական Զարգացման Բանկը, KfW-ն, Եվրամիությունը, ՀԿ-ները, մասնավոր հատվածի ընկերությունները՝ պետության և համայնքների հետ համագործակցությամբ.

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը տարիներ շարունակ ակտիվ աջակցություն է ցուցաբերում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքային ծառայությունների՝ մասնավորապես աղբահանության բարելավմանը: Աղբահանության ոլորտում, մասնավորապես, մոտ երեսուն քաղաքային համայնքների տրամադրվել են մասնագիտացված աղբատար մեքենաներ, աղբամաններ, տեղադրել վարձավճարների հավաքագրման և հաշվառման, համայնքային ծառայության որակից բնակչության գոհունակության հարցման համակարգչային ծրագրեր՝ ապահովելով նաև ուսուցում դրանց կիրառման համար, ցուցաբերել տեխնիկական աջակցություն աղբահանության ռազմավարական պլանների մշակման, ինչպես նաև կենցաղային աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկման հարցում, կատարել է հետազոտություն քաղաքային համայնքներում աղբահանության վիճակի, աղբահանության ծառայություն մատուցող ընկերությունների, ինչպես նաև մատուցվող ծառայությունից բնակչության գոհունակության վերաբերյալ:

Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ մշակվել է աղբահանության ազգային ռազմավարական պլանի նախագիծ: Հատկանշական է աղբավայրերին ուղղված ռազմավարական մոտեցումը, ըստ որի Հայաստանի համար լավագույն տարբերակը կլինի ապակենտրոնացված համակարգը՝ հիմնված համայնքային և մարզային մակարդակներում՝ ստանդարտացված հավաքման կարողության, տեղափոխման կայանների և մի շարք տարածքային սանիտարական հորատեղերի վրա, որոնք կբավարարեն օրինաչափ աշխարհագրական տարածքի սպասարկման համար սահմանված ԵՄ նախագծային և բնապահպանական ստանդարտները: Այս համակարգը ենթադրում է հինգ տարածքային հորատեղեր: Թափոնների հորատեղերը, գտնվում են Շիրակում, Լոռիում, Կոտայքում, Երևանում և Սյունիքում, որոնք կսպասարկեն նաև հարակից մարզերը: Առավել փոքր դյուրիասանելի գյուղական համայնքները կսպասարկվեն ունեցող մեծ կենցաղային կոնտեյնրների միջոցով, որոնք հեշտությամբ կարող են հավաքվել դեպի տեղափոխման կայաններ կամ անմիջապես թափոնների հորատեղեր տեղափոխվելու համար: Կնախատեսվեն վերամշակման ստանդարտ համակարգեր բոլոր քաղաքային կենտրոններում տեղադրված թափոնների հավաքատեղերի համար:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը նույնպես իր լուծման ունի համայնքներում աղբահանության բարելավման գործում՝ առանձին համայնքների տրամադրվելով աղբատար մեքենաներ, աղբարկղեր պլաստիկի առանձնացման համար, աջակցելով աղբի տեսակավորման հոսքագծի տեղադրմանը, աղբի տեսակավորման հանրային քարոզարշավներին և բնապահպանական կրթությանը:

Գերմանական ֆինանսական համագործակցությունը (KfW) աջակցում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը և Վանաձորի քաղաքապետարանին աղբահանության ինտեգրացված կառավարում իրականացնելու հարցում, որը ներառում է աղբահանության ծառայության բարելավում՝ մասնագիտացված տեխնիկայի ներդրման, աղբամանների տեղադրման, երթուղիների պլանավորման համակարգի ներմուծման միջոցով, շրջակա միջավայրին վնաս չպատճառելով՝ աղբի անվտանգ տեղակայումը սանիտարական աղբավայրում՝ նոր աղբավայրի կառուցման, թորանների, ինչպես նաև աղբավայրում գոյացող գազի հավաքման և մշակման համակարգերի ստեղծման միջոցով, աղբի վերամշակման համակարգ ստեղծելու նպատակով՝ հետամուտ լինել մասնավոր հատ վածի ներգրավմանը՝ աղբի տեսակավորման, պահեստավորման և վերմշակման պրակտիկայի ներմուծման միջոցով:

Եվրամիությունը վերջին տարիների դերակատարում է ունեցել Հայաստանում աղբահանության բարելավման ուղղությամբ: Արարատի և Վայոց ձորի մարզերում կոչտ

կենցաղային թափոնների կառավարման ուղղված ծրագրի արդյունքում տրամադրվել են աղբատար մեքենաներ, Վեդիում հիմնվել է միջհամայնքային աղբավայր և աջակցություն է ցուցաբերվել Վեդու համայնքների միության 15 համայնքների աղբահանությունը կազմակերպելու համար: Եվրամիության հարևանության քաղաքականության շրջանակներում աղբի կառավարման մեկ այլ ծրագիր իրականացվել է Լոռու մարզում, որի արդյունքում մշակվել է կոշտ կենցաղային թափոնների կառավարման համապարփակ ռազմավարական պլան, որը բացահայտել և գնահատել է աղբի հավաքման, հետացման և վերամշակման տարբերակներ, առաջարկել ֆինանսական և ինքնաձայնասածական մոդելներ հետագա կիրառման համար, ինչպես նաև սահմանել է աղբավայրի փակման առաջնահերթությունները:

Ֆիխտներ գերմանական կազմակերպությունը իրականացրել է համապարփակ հետազոտություն Երևանի համար՝ ներառելով աղբահանության և սանիտարական մաքրման ընդհանուր իրավիճակի, ոլորտի ֆինանսական վիճակի, աղբավայրերի, աղբի տեսակավորման և վերամշակման հնարավորությունների, մասնավոր հատված՝ ներգրավման հնարավորությունների մասին մանրամասն և խոր վերլուծություն:

Գերմանիայի բնապահպանության դաշնային նախարարության խորհրդատվական աջակցության ծրագրի շրջանակներում Մագդեբուրգի համալսարանի (Գերմանիա) և Երևանի ճարտարապետաշինարարական համալսարանի համագործակցությամբ հայաստանյան հինգ համայնքներում՝ մեկ մեծ (Վանաձոր), երկու միջին (Էջմիածին, Սևան), մեկ փոքր (Թալին) և մեկ գյուղական (Մխչյան) համայնքներում իրականացվեց բաղադրության ուսումնասիրություն, որի արդյունքները, մասնավորապես քաղաքային համայնքներում ցույց տվեցին, որ ներկայումս ընդհանուր աղբի մեջ ծավալային առումով գերակշռող դեր ունի պլաստիկը (30 և ավելի տոկոս), որին հաջորդում են թղթային աղբը և օրգանական աղբը: Միայն այս երեքը միասին կազմում են տվյալ քաղաքներում արտադրվող աղբի 65-70%-ը: Նմանատիպ ուսումնասիրություն իրականացվել է նաև Բերդ համայնքում ամերիկուհի հետազոտող Պատրիցիա Բաթլերի կողմից:

Հասարակական մի քանի կազմակերպություններ տարբեր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ուրույն դերակատարում ունեն Հայաստանում աղբահանության բարելավման և դրա հետ կապված բնապահպանական կրթության խթանման և ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես՝ **Ուրբան Հիմնադրամը** Ալավերդի քաղաքում Հայաստանում առաջինը փորձարկեց աղբյուրից, այսինքն՝ հենց տներից բնակչության կողմից ընդհանուր աղբից պլաստիկի առանձնացման պրակտիկան՝ այդ փորձը տարածելով մյուս մարզերի տասնյակ համայնքեր: Ուրբան Հիմնադրամի մոտեցումը զուգակցվում է ինտենսիվ հանարային քարոզարշավներով (սոցիալական գովազդ, հեռուստաքննարկումներ, համայնքային քննարկումներ, երթեր, համայնքի մաքրությանն ուղղված միջոցառումներ, ցուցանակներ, պաստառներ և այլն) և բնապահպանական կրթությամբ (դասընթացների կամ գիտելիքի մրցույթների տեսքով): Կազմակերպությունը առաջիններից է, որ կոնկրետ գործողություններ է իրականացնում պոլիէթիլենային պարկերի օգտագործման կանխման և վերամշակվող նյութից պատրաստված բազմակի օգտագործման պարկերի կիրառման ուղղությամբ, մշակում և առաջարկում է մոտեցումներ այդ ոլորտի, ինչպես նաև ընդհանրապես աղբահանության բարելավման ուղղությամբ:

Մասնավոր հատվածի կազմակերպությունները սկսել են ակտիվություն ցուցաբերել հատկապես աղբի տեսակավորման և վերամշակման ոլորտներում: Ներկայումս Հայաստանում գործում են տարբեր հզորությունների մի քանի տասնյակ մասնավոր ընկերություններ, որոնք զբաղվում են պլաստիկ, թղթե, մետաղի, ապակու և ռետինե թափոնների տեսակավորմամբ, վերամշակմամբ, իրացմամբ:

Աղբահանության ծառայություն մատուցողները Հայաստանում

Մինչև Հայաստանի անկախացումը Խորհրդային Միությունից և դրան հաջորդած առաջին տարիներին պետական բնակարանային տնտեսությունը և կենցաղային սպասարկումը՝ ներառյալ ԿԿԹ կառավարումը՝ իրականավում էր պետականորեն, բնակչահագործման տեղամասերի (ԲՇՏ) կողմից: 1997 թվականից այդ պարտավորությունը փոխանցվեց տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ներկայումս Հայաստանում կան երկու տեսակի ձեռնարկություններ, որոնք զբաղվում են ԿԿԹ հավաքմամբ ու տեղափոխմամբ՝ (1) առևտրային (շահույթ հետապնդող) և (2) ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) կազմակերպություններ: Առևտրային կազմակերպությունները, սովորաբար, հիմնվում են որպես բաց կամ փակ բաժնետիրական ընկերություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, նաև անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազմակերպությունները կարող են խառը սեփականություն հանդիսանալ, և քաղաքային իշխանությունը կարող է բաժնեմաս ունենալ դրանցում և բաժնետեր համարվել: Քաղաքներում ԿԿԹ կառավարման պարտականություններ կատարող ոչ առևտրային կազմակերպությունները նույնպես տարբեր են՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ), բյուջետային կազմակերպություններ (ԲԿ), համատիրությունների ասոցիացիաներ և այլն:

Այսպիսով, հանրային կազմակերպությունները կարող են ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային լինել (ընդ որում՝ ոչ առևտրային կազմակերպությունները բացառապես հանրային են), մինչդեռ մասնավոր կազմակերպությունները միայն առևտրային են:

Եթե մարզերում աղբահանություն իրականացնող ընկերություններ բացառապես հայաստանյան են, ապա Երևանում աղբահանություն իրականացնելու են միջազգային մրցույթի արդյունքում ընտրված արտասահմանյան ընկերություններ:

Աղբի վերամշակման հնարավորությունները

Համայնքներում թափոնների տեսակավորում և վերամշակում չի կատարվում: Հանրապետությունում տարբեր տեսակի ապակու, թղթի և պլաստիկների, վերամշակման հնարավորություններ կան: Հայաստանում կատարվել են մի շարք ուսումնասիրություններ¹ աղբի բաղադրության վերաբերյալ վեց փորձնական քաղաքներում և արդյունքները ցույց են տվել, որ համայնքներում, պլաստիկ շշերի մասնաբաժինը ծավալային առումով կազմել է մոտ 30%: Աղբի առանձնացումը, հատկապես բնակչության օգնությամբ զգալիորեն կկրճատի համայնքի ծախսերը աղբի հավաքման և հեռացման հարցում:

Հայաստանի մի շարք համայնքներում արդեն սկսել են իրականացնել աղբի, հիմնականում պլաստիկ շշերի, տեսակավորման առաջին քայլերը և տեղադրվում են հատուկ աղբարկղեր տեսակավորված աղբի համար: Ընդ որում՝ տեսակավորումը տարբեր համայնքներում տարբեր եղանակներով է տեղի ունենում: Օրինակ՝ Վեդու և 15 գյուղական համայնքների աղբահանությունն իրականացնող «Վեդու միջհամայնքային միավորում» համայնքների միությունը, ինչպես նաև Վանաձորի քաղաքապետարանը տեսակավորումը կատարում են աղբավայր տեղափոխվող խառը աղբից կամ հենց աղբավայրում տեղակայված աղբից: «Ուրբան Հիմնադրամը» Շվեյցարիայի զարգացման և համագործակցության կազմակերպության, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի և Նորվեգիայի Թագավորության աջակցությամբ Ալավերդիում, Վանաձորում, Հրազդանում, Սևանում, Ախուրյանում, Սիսիանում և Կապանում իրականացրած աղբի տեսակավորման ծրագրերում տվյալ համայնքների հետ համաձայնության է եկել աղբը տեսակավորել աղբյուրի մոտ, աղբարտադրողների օգնությամբ: Նախ, դա հնարավորություն կտա կրճատելու աղբավայր տեղափոխվող աղբի ծավալները, որը կնպաստի աղբավայրի ավելի երկար շահագործմանը: Տեսակավորված պլաստիկ շշերը, որոնք երկրորդային արտադրության հումք են հանդիսանալու, աղբյուրի մոտ տեսակավորվելու դեպքում:

1) 1) Butler P.; "Composition of Solid Waste in the Berd Municipal Dump in Tavush Marz, Armenia, 2008.

2) Переработка бытовых отходов в армении: обучение персонала, сбор данных, включая анализы отходов, рекоменда- ции по действиям в управлении отходами, Проектный партнеры: университет им. Отто фон Гэрике г. Магдебурга и Ереванский государственный университет архитектур строительства, 2011.

Հանրության հետ աշխատանքը

Հանրության հետ աշխատանքը առանցքային նշանակություն ունի պատշաճ աղբահանություն իրականացնելու համար, ավելին՝ առանց բնակչության հետ համագործակցելու և հանրության կրթելու աղբահանության իրականացումն անհնար է: Հաճախ ՏԻՄ-երի մոտ գերիշխում է չհիմնավորված կարծիք, որ իրենք ավելի լավ են պատկերացնում խնդիրը, ավելի ճիշտ գիտեն լուծման ուղիները և բնակչության հետ աշխատանքը համարում են ժամանակի կորուստ: Սակայն ՏԻՄ-երը պետք է գիտակցեն, որ այդ աշխատանքը շարունակական գործընթաց է և պետք է իրականացվի հատկապես երեխաների հետ՝ մանկապարտեզներում և դպրոցներում: Համայնքների համար չափազանց կարևոր է համայնքային բյուջեում հանրության իրազեկությանն ու կրթությանն ուղղված միջոցների նախատեսումը: Այդ ուղղությամբ հայաստանյան համայնքները կարիք ունեն կիրառելու մի ամբողջ գործիքակազմ, որն արդեն հաջողությամբ փորձարկվել է իրենց գործընկեր շատ համայնքներում:

Տեսաձայնային միջոցների օգտագործում

- Սոցիալական գովազդներ. շատ կարճ տևողության այս տեսահոլովակները, ճիշտ ուղերձ պարունակելու դեպքում, կարող է թողնել ավելի մեծ ազդեցություն բնակչության վրա, քան տարիներով աղբահանության բարելավման ուղղությամբ ներդրված գումարները:
- Պարբերաբար անցկացվող հեռուստա/ռադիո քննարկումները ոլորտի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ բավականին լավ գործիք են ոլորտի վերաբերյալ տարբեր կարծիքները լայն լսարանին փոխանցելու համար
- Ցուցանակները և պաստառները՝ պատկերային կամ բառային հակիրճ նպատակային ուղերձներով, օգտագար գործիքներ են մարդկանց մոտ համապատասխան վարքագիծ ու մտածելակերպ ձևավորելու համար:

Համայնքային միջոցառումներ

- Համայնքային քննարկումները, հանդիպումները աղբահանության տարբեր խնդիրների սակագնի, տուգանքների, տեսակավորման, պայմանագրերի և այլնի վերաբերյալ կարևոր են բնակչությանն իրազեկելու և փորձելու նրանց դարձնել ավելի շուտ դաշնակից, քան ընդդիմախոս: Այս հանդիպումներին նպատակահարմար է հրավիրել համայնքային ակտիվ խմբերին, երիտասարդներին, տարեցների, կանանց, ՀԿ-ներին և շագագրգիռ այլ անձանց:
- ՄԱՔՈՒՐ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՔՈՒՐ ԲԱԿ և այլ համայնքային միջոցառումներ, որոնք ոչ միայն լուծում են տվյալ պահին համայնքի, մաքրության խնդիրը, այլ ունեն դաստիարակչական նշանակություն, համախմբում են համայնքի բնակչության ընդհանուր խնդրի համատեղ լուծման շուրջ:

Ուսուցում և իրազեկում համայնքի տարբեր լսարանների համար

- Դասընթացներ, սեմինարներ
- Գիտելիքի մրցույթ
- Բուկլետներ

Հասարակական կարծիքի հարցումներ ստանալու բնակչության արձագանքը մատուցվող ծառայության վերաբերյալ, որի հիման վրա պետք է իրականացվեն համապատասխան բարելավումներ:


Մասնավոր հատվածի ներգրավման անհրաժեշտությունը

Աղբահանությունը համայնքային ծառայության այն ոլորտն է, որն առավել քան նպատակահարմար է հանրային-մասնավոր համագործակցության համար: Ո՞րն է մասնավոր հատվածի ներգրավման առավելությունը: Ինչքանով են ներգրավված մասնավոր ընկերությունները համայնքներում աղբահանության ոլորտում: Ի՞նչ դժվարություններ կան այսօր աղբահանության ոլորտում հանրային մասնավոր համագործակցության համար: Որո՞նք են այն նվազագույն պայմանները, որ աղբահանության իրականացումը համայնքներում ավելի գրավիչ կդարձնեին մասնավոր հատվածի համար:

Ո՞րն է մասնավոր հատվածի ներգրավման առավելությունը հանրային-մասնավոր համագործակցության միջոցով: Նախ, հանրային-մասնավոր համագործակցության

խնդիրը, որպես այդպիսին, հանրային ենթակառուցվածքների կամ հանրային ծառայությունների մատուցում մասնավորի միջոցով: Ծառայությունները մատուցվում են ավելի արդյունավետ և նույն որակի դեպքում՝ ավելի ցածր գնով: Հանրային-մասնավոր համագործակցության միջոցով լուծվում են խնդիրներ, քանի որ հնարավոր է դրաձնում մասնավոր հատվածի զգալի ֆինանսական միջոցների մուտքը հանրային ոլորտ և մասնավոր հատվածի տեխնիկական փորձառությունից, մասնագիտական կարողությունից և արդյունավետությունից օգտվելը: Կարևոր հանգամանք է, որ հանրայինը պահպանում է սեփականության իրավունքը ենթակառուցվածքի նկատմամբ:

Ինչքանով են ներգրավված մասնավոր ընկերությունները համայնքներում աղբահանության ոլորտում: ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ քաղաքային համայնքներում իրականացվող Տեղական ինքնակառավարման ծրագրի երրորդ փուլում հետաքրքիր միտում նկատվեց աղբահանության ծառայություն մատուցող ընկերությունների կարգավիճակի փոփոխության մեջ. եթե մինչև 2006թ քաղաքային համայնքներում աղբահանության ծառայություն մատուցողները հիմնականում մասնավոր ընկերություններն էին, ապա 2006թ.-ից ի վեր, մեծացել է հանրային հատվածի ընկերությունների տեսակարար կշիռը: Ստորև ներկայացվող գծապատկերը ցույց է տալիս հանրային ընկերությունների թվի աճը՝ մասնավորների թվի համեմատ:



Այս միտումը կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով. մասնավոր ընկերությունները չեն արդիականացրել իրենց տեխնիկական բազան և այժմ էլ օգտագործում են տասնյակ տարիների հնության տեխնոլոգիաներ և մեխանիզացիա: Այդ տեխնիկան հնամաշ է, իսկ դրա գործարկումն ու նորոգումը՝ չափազանց թանկ ու դժվար: Երբ քաղաքապետարանները մրցույթ են հայտարարում ԿԿԹ հավաքման ու տեղափոխման ծառայությունների մատուցման համար, մասնավոր ընկերությունները հաճախ իրենց տրամադրության տակ չեն ունենում պայմանագրի կատարման համար անհրաժեշտ մասնագիտացված աղբատարներ: Հաշվի առնելով հաճախ նաև մրցակցության բացակայությունը՝ պայմանագիրը կարող է ստորագրվել դիմած միակ կամակերպության հետ՝ անկախ առկա տեխնիկային տարիքից և որակից:

Ի՞նչ դժվարություններ կան այսօր աղբահանության ոլորտում հանրային մասնավոր համագործակցության համար: Աղբահանության ծառայությունը համայնքներում չի գրավում մասնավոր հատվածի հետաքրքրությունը: Հիմնական պատճառների թվում են.


- Բնակչության անբավարար խտությունը. համայնքների բնակչությունը փոքրաթիվ են, ուստի ստացած եկամուտները չեն ծածկում ծախսերը, առավելաև չեն կարող ապահովել շահույթ: Մասնավորին շահեկան է ներդրումներ անել ավելի մեծ բնակչություն ունեցող համայնքներում:
- Պայմանագրի շատ կարճ ժամկետները մասնավոր ընկերությունների հետ չափազանց կարճ են, համայնքների մեծ մասում 1 տարուց ոչ ավելի
- Սակագնի՝ տնտեսապես հիմնավորված հաշվարկը բացակայում է: Սակագները հիմնականում սահմանվում են քաղաքական և սոցիալական նկատառումներից

ելնելով, համայնքնի ավագանու կողմից: Դրանք զգալիորեն ցածր են այն ծախսից, որը կատարվում է աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման համար, ուստի զգալի ռիսկ է պարունակում մասնավորի համար:


- Այսօրվա հայաստանյան իրականության մեջ (միգրացիա, աղքատություն) մասնավոր հատվածը նախընտրում է ընդհանրապես չառնչվել բնակչության հետ վարձավճարների հավաքագրման մասով, ոչ միայն բնակչության կողմից վճարելու պատրաստակամության բացակայության ռիսկի, այլև Հայաստանից բնակչության հուսունության պատճառով (հաշվառված բնակչության թիվը չի համապատասխանում ֆիզիկապես ներկա բնակչության թվին): Ուստի ներկայումս մասնավոր հատվածին ձեռնտու է, որ համայնքը կիսի այդ ռիսկը և իր վրա վերցնի վարձավճարների հավաքագրումը:

Ստորև սխեմտիկ ներկայացված են երկու մոդելներ, որոնցից մեկը ցույց է տալիս հանրային-մասնավոր համագործակցությունը հիմնված է համայնքային բյուջեից աղբահանության կառավարման և ներդրումների դիմաց կանոնավոր վճարումների կատարելու վրա (կառավարման պայմանագիր), իսկ հանրային-մասնավոր համագործակցության երկրորդ մոդելը հիմնված է համակարգի վարձակալության վրա (վարձակալության պայմանագիր)՝ ապահովելով կանոնավոր վճարումներ մասնավորի կողմից համայնքային բյուջե:

Բյուջեի միջոցով



Վարձավճարի միջոցով



Որո՞նք են այն նվազագույն պայմանները, որ աղբահանության իրականացումը համայնքներում ավելի գրավիչ կդարձնեն մասնավոր հատվածի համար:

Այնուամենայնիվ, մասնավոր հատվածի ներգրավումը մնում է անհրաժեշտություն:

Սակայն դրա համար անհրաժեշտ է ապահովել նվազագույն պայմաններ: Հանրային-մասնավոր համագործակցությունը պետք է հիմնված լինի փոխադրած

չահագրգռվածության և ռիսկերի բաժանման վրա: Հաշվի առնելով ներկա իրավիճակը՝ համայնքների համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մոդելը. աղբահանությունը կառավարելու նպատակով մասնավոր հատվածին ներգրավելով, համայնքը պետք է պահանջի կատարել ներդրումներ և երկուստեք պայմանավորված խելամիտ որոշակի ժամկետում, աստիճանաբար վճարի ներդրումների գումարը և կազմակերպության շահույթը: Ժամկետի ավարտից հետո, կազմակերպի նոր մրցույթ: Այս մոդելի հիմնական քայլերը հետևյալն են.

- Մրցույթի հայտարարում
- Կառավարման պայմանագրի.
 - Համայնքը որոշակի ժամկետով ոլորտը հանձնում է մասնավոր օպերատորի կառավարմանը:
 - Պայմանագրի տևողությունը պետք է բավարարի, որպեսզի օպերատորը կարողանա մարել կատարված ներդրումային ծախսերը և ստանա որոշակի շահույթ:
 - Համայնքը պետք է պահանջի ներդրումներ մասնավոր հատվածից. մասնագիտացված տեխնիկա, աղբամաններ և այլն,
 - Պետք է սահմանի աղբահանության որակի բարձրացման ցուցանիշներ պայմանագրային ժամկետում,
 - Պետք է կանոնավոր ժամանակահատվածներում վճարի օպերատորին, որը ներառում է ոլորտի կառավարման ծախսերը՝ աշխատավարձ, տեխնիկայի և աղբավայրի կառավարում և պահպանում, աղբի տեսակավորում, ինչպես նաև շահույթի չափաբաժինը:

Աղբի կառավարման հիերարխիայի և ռազմավարական մոտեցման ներկայացում

Այսպիսով աղբահանությունը համայնքային այնպիսի ենթակառուցվածք է, որի վիճակից ուղղակի կամ անուղղակի կախված է շրջակա միջավայրի պաշտպանությունը, մարդկանց առողջությունը, կյանքի որակը, քաղաքացու վարքագծի դրական փոփոխությունը և քաղաքի տնտեսական աճի խթանումը, այսինքն՝ պահանջում է համապարփակ, ինտեգրացված մոտեցում:

Յուրաքանչյուր համայնք աղբահանության գործունեության ուսումնասիրությունների հիման վրա պետք է վերլուծի համայնքում աղբահանության իրավիճակը՝ փորձելով պատասխանել «որտե՞ղ ենք մենք այժմ» հարցին և շարադրել ներկայիս իրավիճակի մասին մի շարք տվյալների և աղբահանության ներքին թույլ և ուժեղ կողմերի վերլուծությամբ: Միաժամանակ պետք է որոշվի աղբահանության տեսլականը և երկարաժամկետ նպատակները «որտե՞ղ ենք մենք ուզում լինել» հարցադրմամբ: Աղբահանության տեսլականը արտահայտում է հավաքական ըմբռնումը այն բանի, թե ապագայում ինչ ցանկալի և իդեալական իրավիճակի պետք է ձգտի հայտնվել աղբահանության կազմակերպումը համայնքում, օրինակ՝

Աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծում հիմնված աղբի կրճատման, վերամշակման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված կայուն գործելակերպի, ֆինանսապես կենսունակ կառավարման և հանրության աջակցության և մասնակցության վրա:

Այնուհետև պետք է ձևավորվեն համայնքի աղբահանության ոլորտները և ռազմավարական նպատակները

Շրջակա միջավայրի պաշտպանության տեսանկյունից՝ աղբահանության համակարգի զարգացումը պահանջում է կոմպլեքս մոտեցում, հետևաբար ռազմավարությունը պետք է հիմնվի տարբեր փոխկապակցված ոլորտների զարգացման վրա: Այդ ոլորտներն են.

Ա. Համակարգի զարգացում - կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին օրենսդրություն և կանոնակարգեր, կառավարման թափանցիկություն, վարձավճարների հավաքագրում և հաշվառում, տուգանքների սահմանում, բնակչության և կազմակերպությունների հետ պայմանագրերի ստորագրում, Հայ փոստի, առևտրային բանկերի միջոցով վարձավճարների հավաքագրում, աշխատակազմի ուսուցում:

Բ. Աղբահանության տեխնիկական միջոցների զարգացում - Աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման,

վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր՝ մասնագիտացված տեխնիկա, աղբամաններ ընդհանուր և տեսակավորված աղբի համար, համակարգիչներ՝ վարձավճարների հավաքագրման և հաշվառման համապատասխան ծրագրային ապահովմամբ և այլն:

Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն - ինքնաձախսածածկման հնարավորություններ և տնտեսական արդյունավետության բարձրացում, աղբահանության վճարների գանձման մեթոդներ, ստացականների և պայմանագրերի կիրառման ձևեր, թափոնների տեսակավորման և վերամշակման հնարավորություններ և այլն:

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն - երկկողմանի տեղեկատվության կիրառում, ինտենսիվ հանրային իրազեկման արշավ, բնակչության հետ բացատրական աշխատանքներ, այդ թեմայով ՀԿ-ների, ակտիվ խմբերի, երիտասարդության և դպրոցականների հետ դասընթացներ, բնակիչների անմիջական մասնակցություն տեսակավորման գործընթացին, ինչը կնպաստի աղբահանության և ընդհանրապես բնապահպանական խնդիրների վերաբերյալ նրանց մտածելակերպի փոփոխությանը:

Նշված ուղղություններին համապատասխան պետք է ձևակերպել երկարաժամկետ նպատակներ՝ հաշվի առնելով տվյալ համայնքի աղբահանության տեսլականը: Յուրաքանչյուր նպատակ ենթադրում է աղբահանությանը վերաբերող առանձին խնդիրների և նրանցով պայմանավորված կոնկրետ ծրագրերի իրականացում: Իսկ յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար դրված են խնդիրներ և առաջադրանքներ, որոնց լուծման համար նշված են ժամկետներ, պատասխանատուներ և հղում ֆինանսական աղբյուրներին:

Նպատակ 1. Բարելավել համայնքում աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային օրինական դաշտ:


Նպատակ 2. Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասազերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսա-տնտեսական կայունությանը:

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

Կոչտ կենցաղային թափոնների կառավարման հիերարխիան

Ռազմավարական մոտեցումը կոչտ կենցաղային թափոնների կառավարմանը ենթադրում է որոշակի հիերարխիա, որը սխմատիկ ներկայացված է ստորև.




Թափոնների հիերխիան ունի գլխավայր շրջված բուգի տեսք: Այն բաղկացած է երեք հատվածից, որոնցից յուրաքանչյուրը բնորոշում է որոշակի առանձին վարքագիծ: Ամենախրախուսելի վարքագիծը աղբի կրճատման վարքագիծն է: Դա ենթադրվում է, որ դեռևս աղբյուրի մոտ, մինչև նետելը, պետք է մտածել պոտենցիալ աղբի վերօգտագործման հնարավորությունների, աղբի տեսակավորման մասին, որի շնորհիվ զգալիորեն կնվազի աղբի ծավալը: Հիերարխիայի վերին, ամենաբարձ մակարդակը պահանջում է շարունակական կրթություն և իրազեկում:

Հիերարխիայի հաջորդ, ավելի ցածր մակարդակում ենթադրվում է արդեն տեղակայված կենցաղային թափոնների վերականգնում և վերադարձ տնտեսություն՝ աղբի վերամշակման կամ էիներգիա ստանալու միջոցով:

Հիերարխիայի ամենաստորին մակարդակում դրսևորվում է ամենաքիչ խրախուսվող վարքագիծը՝ աղբի հեռացում աղբավայր կամ այրում:

Աղբարտադրողների ցանկություններն ուղղիղ համեմատական են այս կամ այն վարքագծի դրսևոման հետ: Օրինակ՝ որքան մեծ է ցանկությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ աղբարտադրողը կդրսևորի թափոնների հիերարխիայում ամենաբարձր մակարդակով նախատեսված վարքագիծ և հակառակը:

Հավելված 1



Նկար 1. Աղբավայրի օրինակելի սխեմա

Հավելված 2

Օրենսդրական դաշտ

1. «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՕ, 23-ը հունիսի 2011թ
2. «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանը:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում թիվ 1204-Ն 2002թ. օգոստոսի 1, «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ազգային ծրագիրը».
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, 1995թ.
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, 1998թ.
6. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, 2001թ.
7. Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրք, 24.10.2005թ. ՀՕ-211-Ն
8. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք,
9. Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը «Ընդերքի մասին», 25.02.1992թ
10. Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրք,
11. Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. թիվ ՀՕ-337 օրենքը.
12. Թափոնների մասին» (24.11.2004թ. ՀՕ-159-Ն)
13. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, 26.11.1997թ. թիվ ՀՕ-185
14. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» 2002թ. մայիսի 7, թիվ ՀՕ-
15. «Համատիրությունների մասին» օրենքը, 2002թ. մայիսի 7, թիվ ՀՕ-333
16. «Գնումների մասին» ՀՀ օրենք, 05.06.2000թ. թիվ ՀՕ-62
17. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք 30.05.2001թ.
18. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին» 12.12.1992թ. թիվ ՀՕ-43 ՀՀ օրենք:
19. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» 20.11.1995թ.
20. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք, 11.10.1994թ. ՀՕ-121
21. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, 30.12.1998թ.
22. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1999թ. նոյեմբերի 23-ին,
23. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2000թ. մարտ,
24. «Ագրարային պետական տեսչությունների մասին» ՀՀ օրենք 15.05.1996թ.
25. «Բնապահպանական վերահսկողության մասին» 11.04.2005թ. թիվ ՀՕ-Ն ՀՀ օրենքը
26. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 03.04.2002թ. ՀՕ-320
27. Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մասին ՀՀ կառավարության 12.10.1992թ. թիվ 518 որոշում:
28. «Թափոնների պետական հաշվառման կարգ» 07.12.2007թ. թիվ 1739-Ն
29. ՀՀ կառավարության 08.12.1995թ. թիվ 97 որոշում «Չկարգավորվող թափոնների, դրանց վտանգավոր հատկությունների ցանկեր, հայտավորման, ծանուցման և հեռացման գործողությունների մասին փաստաթղթեր»:

Հավելված 3

Հայաստանում գործող տեսասկավորված աղբի հավաքման և վերամշակման ընկերություններ

Կազմակերպություն/ ընկերություն	Օգտահանման տիպը	Հզորությունը/ տոննա/տարի	Մեկ միավորի գնման արժեքը	Հասցե, հեռախոս, այլ տվյալներ
«Յուրմագրին» ՍՊԸ	մակուլատուրա	150	1կգ-ը` 20-30դրամ	
«Սատուրն-գրին»ՍՊԸ	մակուլատուրա	200	1կգ-ը` 20-30դրամ	
«Բարբար» ՍՊԸ	մակուլատուրա	300	1կգ-ը` 20-30դրամ	
«50-50» ՍՊԸ	մակուլատուրա	1200	1կգ-ը` 20-30դրամ	Արինբերդ փ. 5/1, 3-րդ նրբանցք, Երևան, ՀՀ Հեռ: 470 301 / 470 677 Ֆաքս: 470 677 Էլ. փոստ: im50x50@rambler.ru
Կ.Օգմանյան ԱԶ	մակուլատուրա	200	1կգ-ը` 20-30դրամ	
Նիկոլ Դունան ԱԶ	մետաղի թափոն մակուլատուրա	200-300 120	1կգ-ը` 20-30դրամ	Հասցե.՝ 0005, Երևան, Արցախի պողոտա շենք 23/1 Հեռ:՝ +374-10-430640 +374-10-430473 , +374-10-430499 Ֆաքս.՝ +374-10-436312 Տնօրեն՝ Կարլեն Գևորգյան
«Լավա» ՍՊԸ	մակուլատուրա	470	1կգ-ը` 20-30դրամ	
«ԿԵԵԱ Բասեն	մակուլատուրա	130	1կգ-ը` 20-30դրամ	
«Վազգեն Աբգարյան»ՍՊԸ	մակուլատուրա	100	1կգ-ը` 20-30դրամ	
«Ուստա ԼԱԼ» ՍՊԸ	մակուլատուրա	60	1կգ-ը` 20-30դրամ	
«ՆՏԳ և որդիներ» ՍՊԸ	պլաստիկ	-	1կգ-ը` 75-100դրամ	
«Պլաստիկ»ԲԲԸ	պլաստիկ	-	1կգ-ը` 75-100դրամ	
«Պոլիպլաստ ՋՎ»	պլաստիկ	-	1կգ-ը` 75-100դրամ	
«Գյուտարար»ՍՊԸ	ռետինե իրեր	-		
«Տեքնոքիտ»ՍՊԸ	ռետինե իրեր	-		
«Եվրոպա» ՍՊԸ	մետաղի թափոն	15000		
«Դարի-Գրուպ» ՍՊԸ	ռետինե իրեր	-		
Էներգոսեռնիս	երկաթ	1500-2000		
«Սարանիստ»ՍՊԸ/ ք.Աբովյան	ապակու թափոն	1500-2000		Հասցե՝ Կոտայքի մարզ, Աբովյան, Կարմիրբանակայինների փողոց, շենք 25 Հեռ.՝ +374-10-283002 , +374-222-23597 , +374-222-33597 Ֆաքս.՝ +374-222-24717 Գլխավոր տնօրեն՝ Վարդան Մանուկյան
«Հրատ» ՍՊԸ / Արզնի/ Օսիայան	ապակու թափոն	100 70		

Արձգլաս	ապակու թափոն	2000-2500		Կոտայքի մարզ, Աբովյան, Կարմիրբանակայինների փողոց, շենք 25 Հեռ: +374-10-283002 , +374-222-33597, +374-222-23597 Ֆաքս: +374-222-24717 Գլխավոր տնօրեն՝ Սամվել Հարությունյան
Գլասվորղ	ապակի	2000		Հասցե՝ 2214, Կոտայքի մարզ, Բյուրեղավան, Հարոյան փողոց, շենք 60 Հեռ.՝ +374-222-60043 , +374-222-63300 , +374-10-598318-5212 Գլխավոր տնօրեն, Խորհրդի նախագահ՝ Բաբկեն Սեդրակյան
Ոսկե Գրուպ	երկաթի ջարդոն	4000		
Զուկենտրոն	երկաթի ջարդոն	4000-5000		Հասցե՝ Կոտայքի մարզ, Չարենցավան, Ս. Մելքոնյան փողոց, շենք 13 Հեռ.՝ +374-226-44953 ընդունարան, +374-226-44320 Գլխավոր տնօրեն, +374-226-42053 Գլխավոր հաշվապահ Ֆաքս՝ +374-226-44320 Գլխավոր տնօրեն՝ Անաստասիա Կոստովա
«Մասիսի գոֆրոտարա»ՍՊԸ	թուղթ,կարտոն	450		Հասցե՝ 0801, Արարատի մարզ, Մասիս, Արդյունաբերական կենտրոն, Գործարանային փողոց, շենք 8 Հեռ.՝ +374-10-283430 reception room, +374-10-281762 Ֆաքս՝ +374-10-283453 Տնօրեն՝ Մարինա Մարաբյան
«Թագուհի Կլեոպատրա»ՍՊԸ	թղթի թափոն	800	1կգ-ը 20-30դրամ	
Պոլիսերվ ՍՊԸ, Աբովյան	պլաստիկ			Հասցե՝ 2206, Կոտայքի մարզ, Աբովյան, 2-րդ արտադրական թաղամաս Հեռ.՝ +374-91-428819 (բջջ), +374-93-428819 (mobile), +374-10-623444 , +374-10-621596 , +374-222-33469 գրասենյակ, +374-222-33441 արտադրամաս Ֆաքս՝ +374-10-621596 Տնօրեն՝ Յուրիկ Սահակյան

Գարի Գրուփ ՍՊԸ	պլաստիկ			Հասցե՝ 0090, Երևան, Գայի պողոտա, շենք 57/1 /գրասենյակ և խանութ/, Բագրատունյաց փողոց, շենք 8 /խանութ/, Շիրակի մարզ, Գյումրի, Լոռու մարզ, Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, շենք 81 /խանութ/ Հեռ. գրասենյակ և խանութ՝ +374-10-641432 , +374-10-636582 , +374-10-646854 ; shop: +374-10-421596 ; Գյումրի, խանութ՝ +374-312-40556 ; Վանաձոր, խանութ՝ +374-322-44556 Ֆաքս՝ +374-10-631180 Տնօրեն՝ Եղիշե Հարությունյան
Արմբումպրոմ	թղթի թափոն			Արաբիա փ. Երևան, ՀՀ Հեռ. +374-10-528678
«Կարտոն-տարա» ՍՊԸ	թղթի թափոն			
«Յոկտենբերյանի ֆերոսպլավ գ-ն» ՍՊԸ	մոլիբդենի թափոն	1800, III դաս		
«Ավտոմատիկա ԳՀԻ» ք.Վանաձոր	ռետինե իրեր	-		
ԵՐԵՎԱՆ ՊԼԱՍՏ փակ բաժնետիրական ընկերություն	պլաստիկ			Հայաստան, 0054, Երեւան, Դավթաշեն, 3-րդ թաղամաս, շենք 108 +374-10-364694
«Բումիզ» թղթաղաց ընկերություն	թուղթ, ստվարաթուղթ			Նորքի այգիներ փ.193/1, որևան, ՀՀ Հեռ: +374-10-651 282
ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻԵ հայ-կանադական համատեղ ձեռնարկություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	թուղթ		1 կգ-ը 25 դրամ/ձեռնարկությունում, 10 դրամ/տեղում	Արմեն Բաբայան , գործադիր տնօրեն Հասցե՝ Հայաստան, 0061, Երեւան, Մալիսի փող., շենք 31; Մաշտոցի պող., շենք 54 (սրճարան) Հեռ: +374-10-446303, +374-10-446303, ընդունարան, +374-10-445633, +374-10-445633, մատակարարման եւ միջազգային կապերի բաժին, +374-10-445663, +374-10-445663, իրացման բաժին Ֆաքս՝ +374-10-449901 +374-10-449901 http://www.grandcandy.am
ՕՎԱԼ-ՊԼԱՍՏԻԿԵ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	պլաստիկ			Հասցե՝ Հայաստան, 0081, Երեւան, Հաղթանակ գյուղ (4-րդ գյուղ), 1-ին փողոց, շինություն 1/8 Հեռ: +374-10-720059, +374-10-720059 Ֆաքս՝ +374-10-746002, +374-10-746002 http://www.ovalplast.com
ՀԻՏԵՔՍ ՊԼԱՍՏԻԿԵ փակ բաժնետիրական ընկերություն	պլաստիկ			Սամվել Թումանյան , գլխավոր տնօրեն Հասցե՝ Հայաստան, 0033, Երեւան, Հակոբ Հակոբյան փող., շենք 3/8 Հեռ: +374-10-220040, +374-10-220040 Ֆաքս՝ +374-10-278242, +374-10-278242